

ԼՂ 2020 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԴԻԱ  
ՈՒՂԵԿՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ



Երևան 2020 թ.

---

**Հետազոտության**

**մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝**

«Ռեգիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանի

**Մոնիտորինգի խումբը՝** Սոնա Զյուրքյան, Անժելա Չոբանյան,

Իրինա Հովհաննիսյան, Մերի Սարգսյան, Տիգրան Բաղդասարյան,

Մարինե Սարգսյան

**Արդյունքների տեխնիկական մշակումը,**

**հաշվարկը, աղյուսակներն ու գրաֆիկները՝** Շողիկ Ստեփանյանի

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ հետազոտություն է սա ----- 4

### ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հետազոտված մեդիա հարթակները ----- 6

Հաշվարկի սկզբունքները ----- 7

### ՄԵԴԻԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ընտրությունների մասին նյութերի ինտենսիվությունը ՀՀ եւ ԼՂ ՁԼՄ-ներում----- 9

Ինչի մասին. թեմաների վարկանիշը ----- 13

Հակամարտության թեման թեկնածուների ծրագրերում եւ քարոզարշավի ընթացքում----- 19

Ովքեր՝ ինչ թեմաներով ----- 25

Ովքեր՝ որքան, ում մասին՝ որքան ----- 28

Քարոզչություն եւ հակաքարոզչություն ----- 29

Ֆեյսբուքը ԼՂ ընտրությունների քարոզչական գործիք ----- 34

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----- 39

ՀԱՎԵԼՎԱԾ ----- 42

## Ինչ հետազոտությունն է սա

2020թ. մարտի 31-ին ԼՂ-ում տեղի ունեցան նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ: ԼՂ ընտրությունների պատմության մեջ **առաջին անգամ** նախագահական ընտրություններն անցան երկու փուլով: Ապրիլի 14-ին նախագահականի երկրորդ փուլ դուրս եկած ԼՂ նախկին վարչապետ Արայիկ Զարությունյանն ընտրվեց ԼՂ նախագահ:

Եվ խորհրդարանական, եւ նախագահական ընտրությունները մրցակցային էին նաեւ մասնակից քաղուժերի, նախագահի թեկնածուների քանակի առումով: Եվ դա այս ընտրությունների **երկրորդ տարբերանշանն է**: Նախագահի պաշտոնի համար ընտրություններին մասնակցեցին 14 թեկնածուներ, որոնց մեծ մասը հանրությանը լավ ծանոթ գործիչներ էին: Նրանցից երկուսի համար (ԼՂ Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար, գեներալ Վիտալի Բալասանյան ու ԼՂ արտգործնախարար Մասիս Մայիլյան) այդ ընտրությունները նախագահ դառնալու երկրորդ փորձն էին: Այս ընտրություններում Արայիկ Զարությունյանի երկրորդ փուլի մրցակիցը Մասիս Մայիլյանն էր:

Ընտրական գործընթացներին մասնակցող քաղաքական ուժերի մեծ մասը (15 կուսակցություններից 10-ը) նորաստեղծ, վերջին երկու տարիների ընթացքում հիմնված կուսակցություններ էին: Սա այս ընտրությունների **երրորդ ուրույն հատկանիշն է**: Խորհրդարան անցած 5 քաղաքական ուժերից երկու կուսակցությունները, թեեւ նորաստեղծ ուժերի շարքից են, բայց նրանց ղեկավարները ԼՂ-ում եւ Զայաստանում հանրահայտ երկու բարձրաստիճան պաշտոնաթող զինվորականներ են (Ս. Բաբայանն իր «Միասնական հայրենիք» եւ Վ.Բալասանյանն իր «Արդարություն» կուսակցություններով):

Նոր խորհրդարան անցած 5 կուսակցություններից 4-ը (Ա. Զարությունյանի «Ազատ հայրենիք», Վ. Բալասանյանի «Արդարություն», Դ. Իշխանյանի ԶՅԴ, Ա. Ղուլյանի «Արցախի ժողովրդավարական կուսակցություն») հանձնս իրենց ղեկավարների՝ մրցակցել են նաեւ նախագահի պաշտոնի համար:

ԼՂ-ում ընտրությունների **մյուս առանձնահատկությունը** կորոնավիրուսի համաճարակի պայմաններում դրանց անցկացումն էր, ինչի արդյունքում կարող ենք ԼՂ-2020 գործընթացն անվանել «ընտրություններ (չ)հայտարարված արտակարգ իրավիճակում»: Այս «ուղեկցող» հանգամանքը որոշ ազդեցություն ունեցավ գործընթացի վրա. հնչեցին ընտրությունները հետաձգելու մասին նախագահի մի խումբ թեկնածուների կոչեր, ծավալվեց դիսկուրս ընտրական գործընթացն այս պայմաններում (չ)շարունակելու հետեւանքների մասին: Երկրորդ փուլի ընթացքում Մ. Մայիլյանը կոչ արեց քաղաքացիներին չգնալ ապրիլի 14-ի քվեարկությանը: Այդ օրն ինքը չքվեարկեց:

Դեռ նախքան բոլոր այս առանձնահատկությունների դրսեւորումը 2020թ. ընտրությունները որպես Հայաստանում թավշյա հեղափոխությունից հետո ԼՂ-ում կազմակերպվող առաջին գործընթաց արդեն դարձել էին նաեւ հայաստանյան հանրության ու մեդիայի ուշադրության առարկա, տարբեր դիսկուրսների շրջանառման առիթ: Ինչը կարելի է վստահաբար նշել որպես այս ընտրությունների **եւս մեկ տարբերանշան**, եթե հաշվի առնենք դարաբաղյան նախորդ ընտրությունների նկատմամբ ուշադրության աստիճանը Հայաստանում:

Մեր հետազոտությունն այս վերջին առանձնահատկության մասին է: Այն մասին է, թե

- **վերբալ մակարդակում ի՞նչ փոփոխություններ կրեց այդ հետաքրքրվածությունն արդեն ԼՂ ընտրական փաստացի գործընթացի ժամանակ,**
- **ի՞նչ բովանդակություններ, ուղերձներ էին շրջանառում դարաբաղյան ու հայաստանյան լրատվամիջոցները քարոզարշավի ընթացքում, մեծ հաշվով՝ «ինչի՞ մասին էին» այս ընտրությունները,**
- **ի՞նչ չափով արտահայտվեցին հայաստանյան եւ դարաբաղյան ՉԼՄ-ների նախընտրություններն այս կամ այն ուժի նկատմամբ,**
- **մրցակցային ի՞նչ վարք դրսեւորեցին քարոզարշավի մասնակից ուժերն ու գործիչները:**

Սա դարաբաղյան մեդիայի խորքային ուսումնասիրության մեր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի առաջին փորձն էր:

### Հետազոտված մեդիա հարթակները

Միասնաբար հետազոտել ենք հայաստանյան եւ դարաբաղյան 8 օնլայն ՉԼԼՄ-ներ, 6 հեռուստաընկերությունների 16 հաղորդաշարեր փետրվարի 15 - ապրիլի 14 ընթացքում (սկսած այն օրվանից, երբ լրացավ ընտրությունների համար ԼՂ ԿԸՀ-ում փաստաթղթեր ներակայացնելու վերջնաժամկետը, մինչև նախագահական ընտրությունների երկրորդ փուլի քվեարկությունը): Առաջին պաշտոնական քարոզարշավի (փետրվարի 26- մարտի 29) երկրորդ կեսից, երբ վիրուսի սպառնալիքի պատճառով մրցակիցները մեկը մյուսի ետեւից դադարեցրին կենդանի շփումները ընտրողների հետ եւ սկսեցին քարոզարշավներն առաջ մղել միայն ՖԲ-յան հարթակներում, ավանդական ՉԼՄ-ներում, ձեռնարկեցինք նաեւ նախագահի թեկնածուների սոցցանցային քարոզչական գործողությունների ուսումնասիրությունը:

**Հայաստանում** օնլայն ՉԼՄ-ների եւ հեռուստաընկերությունների ընտրությունը պայմանավորված էր ինչպես ռեյտինգներով, այնպես էլ նրանց դրսեւորած քաղաքական նախապատվություններով/քաղաքական առնչություններով: Հետազոտվել են 5 օնլայն ՉԼՄ-ներ (1in.am, News.am, Armtimes. com, Aravot.am, 168.am) եւ 5 հեռուստաընկերությունների 14 հաղորդումներ:

Դրանք են՝

- Հայաստանի հանրային ՀԸ – «Լուրեր»-ի հիմնական թողարկումը, նաեւ՝ « Հարցազրույց Պետրոս Դադարյանի հետ», «Հանրային քննարկում», «Խաղի կանոններ» թոք-շոուները,
- Երկիր մեդիա ՀԸ – «Երկիրն այսօր» լրատվականի հիմնական թողարկումը, նաեւ՝ «Երկրի հարցը» թոք շոուն,

- Կենտրոն ՅԸ – «Էպիկենտրոն» լրատվականի հիմնական թողարկումը<sup>1</sup>,
- Արմայուզ ՅԸ - «Երեկոյան լուրեր Աբրահամ Գասպարյանի հետ» լրատվականի թողարկումները, «Հայելու առաջ», «Պրեսսինգ», «Անվտանգության գործոն», «Օրախնդիր» թոք-շոուները,
- 5-րդ ալիք ՅԸ – «Հայլուր» լրատվականի հիմնական թողարկումը, «Հարցազրույց» թոք-շոուն:

**ԼՂ-ում** ուսումնասիրության համար ընտրել ենք 3 օնլայն ՉԼՄ-ներ՝ Artsakhpess.am, Aparaj.am, Atsakhtert.am (դարձյալ լրատվամիջոցների քաղաքական առնչությունները հիմք ընդունելով), նաեւ ԼՂ-ում գործող միակ հեռուստաընկերության՝ Արցախի հանրայինի երկու հաղորդումները՝ «Օր» լրատվականի հիմնական թողարկումը, «Դեմ առ դեմ» թոք-շոուն:

## Հաշվարկի սկզբունքները

- **Ինչի մասին են խոսել եւ որքան** – ընտրությունների մասին նյութերում արծարծված թեմաները սահմանել ենք՝ ելնելով հետազոտված մեդիա արտադրանքի բովանդակային վերլուծությունից: Այս կամ այն թեմայի ինտենսիվությունը չափել ենք «Մեկ նյութ-մեկ կամ ավելի թեմա» սկզբունքով:
- **Ով է խոսել եւ որքան** – Բոլորին (քաղաքական, հասարակական, մասնագիտական եւ այլ խմբերի ներկայացուցիչներին, լրագրողներին, հասարակ քաղաքացիներին), ում խոսքը ընտրությունների մասին տեղ է գտել մեդիա հարթակներում, սահմանել ենք որպես թեմայի հեղինակների: Նրանց ակտիվությունը չափել ենք՝ ելնելով նրանց հիշատակած թեմաների քանակից, «Որքան հեղինակ՝ նույնքան թեմա սկզբունքով»:

<sup>1</sup> Կենտրոն ՅԸ-ում թոք-շոու հաղորդումներ մեր հետազոտության ժամանակահատվածում չեն եղել:

- **Ում մասին են խոսել** սանդղակում հիշատակումներն արձանագրել ենք այնպես, ինչպես արվել են: Գործիչների ու քաղուժերի/դաշինքների, նրանց կողմից առաջադրված թեկնածուների կոնկրետ անունների դեպքում արձանագրել ենք կոնկրետ անուններ, ընդհանուր ձեւակերպումների դեպքում (ՀՀ քաղուժեր, ԼՂ քաղուժեր, թեկնածուներ, ՀՀ իշխանություններ, ԼՂ իշխանություններ եւ այլն) արձանագրել ենք որպես ոչ կոնկրետ հիշատակումներ: «Ում մասին» սանդղակում արձանագրել ենք միայն ընտրություններին մասնակցած նախագահի թեկնածուների, կուսակցությունների/դաշինքների, նաեւ ընտրությունների անցկացման համար պատասխանատու պաշտոնական շրջանակների անունները:
- **Ինչպես են խոսել** – կոնկրետացիոն նշանները (+, -, 0) որոշել ենք՝ ելնելով ձեւակերպումների ուղիղ իմաստաբանական (semantic), այլ ոչ թե ենթատեքստային ուղերձներից: Այս հետազոտության ընթացքում արձանագրել ենք միայն այն կոնկրետացիոն նշանները, որոնք քաղուժերի, գործիչների, պաշտոնական շրջանակների մասին են եղել, «**Որքան հիշատակում՝ այնքան կոնկրետացիոն նշան սկզբունքով**»:
- Լրատվական հեռուստահաղորդումների դեպքում մեկ նյութ ենք համարել ընտրությունների թեմայով առանձին սյուժեները, թոք-շոու հաղորդումների դեպքում՝ դրանց ամբողջական թողարկումները

### Ընտրությունների մասին նյութերի ինտենսիվությունը ՀՀ եւ ԼՂ ՉԼՄ-ներում

Թեեւ նախագահական ընտրություններն անցան երկու փուլով, բայց քարոզարշական մրցապայքարի ողջ ծանրությունը մնաց առաջին փուլի շրջանակներում (փետրվարի 26-մարտի 29): Եվ դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ: Ապրիլի 1-ին, առաջին փուլի քվեարկության հաջորդ օրն իր ասուլիսի ժամանակ երկրորդ փուլ դուրս եկած նախագահի թեկնածու Ա. Հարությունյանը հայտարարեց, որ քարոզչական իմաստով ընտրողներին ամեն ինչ արդեն ներկայացվել է առաջին փուլի քարոզարշավի ժամանակ, ավելացնելով բան չկա: Չնայած, հետագայում, երկրորդ փուլի քարոզչության համար հատկացված ժամանակահատվածում նա մի քանի հարցազրույցներ տվեց Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը, Ազատություն ռադիոկայանին, այլ ՉԼՄ-ներին, միայնակ մասնակցեց երկրորդ փուլի քվեարկությունից առաջ պլանավորված հեռուստաբանավեճին Արցախի հանրային հեռուստաընկերությունում (ապրիլի 12): Իսկ նրա հետ երկրորդ փուլ դուրս եկած Մ. Մայիլյանն ապրիլի 5-ին հայտարարություն տարածեց՝ կոչ անելով ընտրողներին կորոնավիրուսի ահագնացող սպառնալիքի պատճառով չգնալ ապրիլի 14-ի քվեարկությանը: Ֆորմալ առումով իր թեկնածությունը քվեարթերթիկից չհանած, բայց ըստ էության այդպես երկրորդ փուլից հրաժարված Մ.Մայիլյանն այլեւս ոչ մի այլ բան ոչ ՖԲ-ում, ոչ էլ որեւէ ՉԼՄ-ին չասաց: Չմասնակցեց նաեւ նախընտրական երկու հեռուստաբանավեճերին Արցախի հանրայինում: Առաջին հեռուստաբանավեճին (մարտի 29)՝ այլ հիմնավորմամբ:


Բայց փաստացի ընտրական գործընթացի լուսաբանումը դարաբաղյան եւ հայաստանյան մեդիայում առաջին փուլում էլ ցցուն ինտենսիվ չստացվեց: Չնայած, որ կար որոշում ԼՂ ընտրություններն ացկացնել ժամանակին, եւ ԼՂ մեդիան ֆորմալ առումով որեւէ խոչընդոտ չունեց ընտրություններն ավելի ինտենսիվ լուսաբանելու համար: Իսկ հայաստանյան մեդիայում դարաբաղյան

ընտրությունների թեման ետ մղեցին սկզբում երկրում սահմանադրական փոփոխությունների համար հանրաքվեի, հետո՝ կորոնավիրուսի տարածման, կանխարգելման, հայտարարված ԱԴ-ի թեմաները:


Մեր արդյունքներով՝ ընտրություններն ավելի քիչ օրերի ընթացքում են լուսաբանվել դարաբաղյան օնլայն ՉԼՄ-ներում, քան հայաստանյան օնլայն հարթակներում: Ղարաբաղյան օնլայն ՉԼՄ-ներում մեկ օրում ավելի քիչ քանակի նյութեր են արտադրվել, քան մեկ օրում հայաստանյան նույն տիպի ՉԼՄ-ներում: Եթե հայաստանյան օնլայն ՉԼՄ-ներում մեկ օրվա ընթացքում ընտրությունների մասին հրապարակվել է առավելագույնը մինչև 7-15 նյութ (News.am-15, 1in.am- 12, Aravot.am-9, 168.am-7), ապա Ղարաբաղյան օնլայն ՉԼՄ-ներում մեկ օրում ընտրությունների մասին նյութերի առավելագույն քանակը կազմել է 5-ից (Artsakhpress.am, Artshakhtert.com) մինչև 10 նյութ (ճիշտ է Aparaj.am-ում ընտրությունների մասին այդքան նյութ հրապարակվել է ընդամենը մեկ անգամ): Հայաստանյան եւ Ղարաբաղյան օնլայն ՉԼՄ-ների շարքում ընտրությունների թեմայի ամենացածր ինտենսիվություն ունեցել է Armtimes.com-ը, որն ընտրությունների թեմային անդրադարձել է եւ էլ ավելի քիչ օրերի ընթացքում, եւ մեկ օրվա ընթացքում արտադրել է առավելագույնը 3 նյութ:

**Տես ստորեւ բերված գրաֆիկը:**

**Ընտրությունների մասին նյութերով օրերի քանակ ՀՀ եւ ԼՂ օնլայն ՉԼՄ-ներում  
(15.02-29.03.20)**



Հեռուստատեսային ամենօրյա լրատվության առումով Արցախի հանրային ՀՇ առաջ է անցել հայաստանյան բոլոր 5 հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումներից: Արցախի հանրայինն ամենօրյա ռեժիմով սկսեց լուսաբանել ընտրությունների թեման միայն պաշտոնական քարոզարշավի ընթացքում: Օրվա լրատվության առումով երկրորդ եւ երրորդ դիրքերում են եղել Հայաստանի հանրային եւ 5-րդ ալիք հեռուստաընկերությունները: ԼՂ ընտրությունների մասին ամենից քիչ օրերի ընթացքում է լուր հաղորդել Կենտրոն ՀՇ: **Տես ստորեւ բերված գրաֆիկը:**



## Ինչի մասին. թեմաների վարկանիշը

Ընտրությունների մասին նյութերի բովանդակային վերլուծությունը ցույց տվեց, որ թեմատիկ բազմազանության տեսանկյունից առաջին փուլի քարոզարշավը գերիազեցած բնույթ է ունեցել: Արձանագրել ենք հայաստանյան եւ դարաբաղյան մեդիա հարթակներում շրջանառված 36 տարբեր թեմաներ<sup>2</sup>: Դրանք վերաբերվել են LՂ ներքին եւ արտաքին կյանքի տարբեր խնդիրներին, արժարժվել են տարբեր ինտենսիվությամբ, կրել են տարբեր իմաստային շեշտադրումներ, եւ չնայած ընդհանուր առմամբ մրցակիցների քարոզչական կոռեկտ հռետորաբանությանը, հնչեցվել են տարբեր հասցեագրումներով:

**Հայաստանյան եւ LՂ ՉԼՄ-ներում առավել շատ արժարժված թեմաների առաջին տասնյակների միջեւ կան որոշ էական տարբերություններ:** Այսպես, բացի բուն ընտրական թեմաներից (ընտրական գործընթաց, քարոզարշավ, ընտրակաշառք/ այլ խախտումներ) հայաստանյան օկլայն ՉԼՄ-ներին ու հեռուստաընկերություններին առավել շատ հետաքրքրել են քաղաքական բնույթի թեմաները՝ ՀՀ-LՂ հարաբերությունների թեման, հակամարտության ունեցած դերակատարության եւ դրա կարգավորման, անվտանգության թեմաները (վերջինս ի դեպ ներկայացվել է ոչ միայն հակամարտության, այլեւ ներհասարակական, ներհայկական միասնականության, համերաշխության ու այլ համատեքստերում), ընտրությունների ազատ ու թափանցիկ անցկացման կարեւորության եւ առհասարակ LՂ-ում իրավունքների ու ազատությունների թեման, ինչպես նաեւ LՂ-ում ներքաղաքական հարաբերությունների, մրցակից ուժերի/նախագահի թեկնածուների անցած ուղու նշանակության թեման:

Մինչդեռ LՂ մեդիայում ակնհայտորեն զգացվել է ավելի շատ ներքին կյանքի կազմակերպմանն առնչվող թեմաներով հետաքրքրվածությունը: Օրինակ, սոցիալական խնդիրների ու տնտեսության հետ կապված հարցերը LՂ օկլայն ՉԼՄ-ներում ավելի բարձր հորիզոնականներում են, քան ՀՀ-LՂ հարաբերությունների հարցը, որն ի դեպ Արցախի հանրային ՀԸ-ն թեմաների առաջին

<sup>2</sup> Թեմաների ամբողջական ցանկը տես Հավելվածում:


տասնյակ չի էլ մտել: Ոչ ԼՂ օկլայն, ոչ էլ հանրային հեռուստաընկերության նյութերում հակամարտության / կարգավորման թեման, որը նույնպես բացվել է ժողովրդի համար հակամարտության նշանակության, կարգավորման համար ընդունելի կամ անընդունելի տարբերակների քննարկման տեսանկյունից, չի մտել առավել ինտենսիվ լուսաբանված թեմաների տասնյակ: Իսկ տասնյակում հայտնված Միացումի թեմայով նյութերում ավելի շատ խոսվել է հասարակության մեջ դրա նկատմամբ նախկինում եւ այժմ եղած վերաբերմունքի, Հայաստանի հետ փաստացի հարաբերությունները պաշտոնապես ձեւակերպելու մասին:

Ի դեպ, ՀՀ-ԼՂ հարաբերությունների թեման, որը ՀՀ եւ ԼՂ մեղիայում տարբեր ինտենսիվությամբ է լուսաբանվել, այս անգամ գլխավորապես ձեւավորվել է ԼՂ ընտրություններին Հայաստանի միջամտության, Հայաստանի համար ընտրությունների ազատ ու թափանցիկ անցկացման նշանակության, վարչապետ Ն.Փաշինյանի համար նախընտրելի ԼՂ նախագահի թեկնածուների հարցերի շրջանառման արդյունքում:


Ըստ Էուբյան քարոզարշավի ընթացքում շրջանառված հարցերի/խնդիրների բազմազանությունը հանգեցրեց մեզ այն եզրակացությանը, որ քարոզարշավի ժամանակ այսպես կոչված տաբու թեմաներ չմնացին, խոսվեց ԼՂ-ի կյանքին վերաբերվող գրեթե բոլոր ոլորտների ու խնդիրների մասին: Իհարկե ակնհայտորեն ավելի պակաս ինտենսիվությամբ, բայց խոսվեց նաեւ այնպիսի «Էկզոտիկ» հարցերից, ինչպես երիտասարդների, քաղաքական դաշտում սերնդափոխության, ԼՂ-ում հասարակական ակտիվության, կանանց եւ այլ խնդիրների մասին:

Ընդգծման արժանի է նաեւ այն փաստը, որ ԼՂ-ում ազատ կամարտահայտման անհրաժեշտությունը ուղղակիորեն չի կապվել հակամարտության թեմայի հետ, մեկ-երկու անգամ են ընդամենը հիշատակվել ընտրությունների հանդեպ Ադրբեջանի կամ միջազգային հանրության վերաբերմունքի հարցերը: **Տես ստորեւ բերված գրաֆիկները:**


**ՀՀ օնլայն ՁԼՄ-ներում ամենից շատ արժարժված թեմաների տասնյակը**  
%




**ՀՀ հեռուստահաղորդումներում ամենից շատ արժարժված թեմաների տասնյակը %**



**ԼՂ օկլայն ՁԼՄ-ներում ամենից շատ արձարծված թեմաների տասնյակը %**



### Արցախի հանրային ՅԸ-ում ամենից շատ արժարժված թեմաների տասնյակը %



## Հակամարտության թեման թեկնածուների ծրագրերում եւ քարոզարշավի ընթացքում

Մարտի 29-ին կազմակերպվեցին Նախագահի թեկնածուների դեբատներ<sup>3</sup> Արցախի հանրային հեռուստաընկերությունում, որին մասնակցեցին 14-ից 12 թեկնածուներ: Մասիս Մայիլյանն ու ինքնառաջադրված Զրիստին Բալայանն անարդյունավետ համարելով ընտրված ձեւաչափը՝ հրաժարվեցին գնալ բանավեճի:

Մոտ 1.5 ժամ տեւած դեբատների ընթացքում թեկնածուների միմյանց ուղղված հարցերի մեծ մասը կոռուպցիայի, վարչական ռեսուրսների օգտագործման թեմայով էին: Ղարաբաղյան հակամարտության եւ կարգավորման մասին կարծիքներ հնչեցին դեբատը վարող լրագրողի խնդրանքով: Դրանք, չնայած որոշ սրբերանգային տարբերությունների, ընդգծեցին կոնսենսուս տարածքների, կարգավիճակի, սպառազինման, մարտունակ բանակի, առանցքային այլ հարցերում:

Այդ կոնսենսուսն արտահայտվեց Նաեւ քարոզարշավի ընթացքում: Հակամարտության թեման իրենց՝ թեկնածուների, միջեւ ընթացած մրցակցության, առավելեւս հակաքարոզչության առիթ չի դարձել: Չնայած, որ ընդհանրապես հակամարտությունը, նրա տարբեր փուլերում մասնակցություն ունեցած թեկնածուները որպես օրենք վկայակոչել են իրենց անձնական դերակատարությունը, ռազմական հմտությունները, թեժ ժամանակահատվածներում իրենց պահվածքը: «Զաղուժի/գործչի անցած ուղի» սահմանումով թեմայի մեջ մեր հավաքած բովանդակություններում զգալի մաս են կազմել հակամարտության հետ կապ ունեցող այս կարգի հայտարարությունները, եւ ավելի պակաս քանակի են եղել անցյալում կոռուպցիոն գործարքների հետ առնչություն ունենալ/չունենալու մասին հայտարարությունները:

<sup>3</sup> Առաջին անգամ ԼՂ ընտրությունների պատմության մեջ տեղի ունեցած դեբատներին հետագոտված մյուս ղարաբաղյան ՉԼՄ-ները ոչ մի կերպ չեն անդրադարձել: Դեբատները տեղ չեն գտել Նաեւ168.am եւ Armtimes.com- ում: Հատվածաբար կամ ամբողջությամբ դեբատների տեսագրությունը հրապարակվեց Aravot.am, News.am, 1in.am կայքերում:

**Վիտալի Բալասանյան.** «Ուզում եմ անկեղծ լինել. երբեւէ խրամատը չեմ լքել եւ չեմ լքելու, ծառայել եւ ծառայելու եմ իմ ժողովրդին: Լինելու եմ խրամատում այն ժամանակ, երբ վտանգ կսպառնա Արցախին եւ Հայաստանին»<sup>4</sup>:

**Արայիկ Հարությունյան.** «Արայիկ Հարությունյանը կիսում է տեսակետը, որ Արցախի նախագահը պետք է ռազմական ուղի անցած լինի. « Եթե խոսքը ռազմական ճանապարհի մասին է, ես ունեմ բավարար եւ ինչ-որ տեղ նաեւ առավելություն ունեմ այդ առումով, -ասաց նա»<sup>5</sup>:

**Վահան Բադալյան.** «Մեր թիմի անդամների մեծ մասն ունի պատմություն Արցախյան շարժման ակունքներից սկսած: Պատահական մարդիկ չենք»<sup>6</sup>:

**Հակամարտության կարգավորման մասին թեկնածուների ծրագրային տեսլականների** միջեւ եղած միակ էական տարբերությունը ԼՂ անկախության միջազգայնորեն ճանաչմանը հասնելու եւ Հայաստանի հետ անմիջապես միացում իրականացնելու դրույթներով են արտացոլված:

**Մասիս Մայիլյանի** նախընտրական ծրագրում կա առանձին բաժին Միացումի եւ անկախության հայեցակարգի մասին: Այստեղ ասվում է, որ անկախության մարտավարությունն ամենեւին չի հակասում Միացումի գաղափարին: Այն նպատակ ունի

---

<sup>4</sup> «Հայաստանի քաղաքական իշխանությունը հակահայ քաղաքականություն է վարում». Վիտալի Բալասանյան, <https://news.am/arm/news/564371.html>

<sup>5</sup> Երեւի զգում են, թե ընտրության արդյունքներն ինչպիսին են լինելու». Արայիկ Հարությունյանը՝ իրեն ուղղված մեղադրանքի մասին, <https://news.am/arm/news/566015.html>

<sup>6</sup> Հայաստանի նոր իշխանությունները արցախցուն հին ռեժիմի դեմ միայնակ են թողել. Վահան Բադալյան, <https://www.1in.am/2706581.html>

միջազգայնորեն ճանաչելի եւ ընդունելի դարձնել Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, որը հետագայում նաեւ ճանապարհ կհարթի Միացումի համար: Այդ Միացումը եւս ընկալելի համարելու համար:

Հակամարտության կարգավորման բաժնում շեշտվում է, որ «տարածքներ կարգավիճակի դիմաց, տարածքներ խաղաղության դիմաց» դրույթներն անընդունելի են:

**Արայիկ Հարությունյանի** ծրագրում բավական հակիրճ ասվում է, որ կա խնդիր Արցախի անկախության միջազգային ճանաչման ակտիվացման, հակամարտության խաղաղ վերջնական կարգավորման, որը պետք է բխի Արցախի ժողովրդի իրավունքից ու անվտանգությունից:

**Վիտալի Բալասանյանի** եւ նրա կուսակցության նախընտրական ծրագրում հակամարտությանը եւ կարգավորմանը վերաբերվող դրույթները նաեւ Հայաստանի եւ ԼՂ-ի համակարտության հարցում դերակատարումների սահմանման մասին են:

Այսպես, ընդգծվում է, որ անհրաժեշտ է՝

- Արցախի հանրապետության ինչպես միջազգային ճանաչում, այնպես էլ ՀՀ-ի կողմից որպես երկրորդ պետականության սուբյեկտ ճանաչում,
- Հայաստանի և ԱՀ միջև ռազմավարական դաշինքի ձևավորման մասին միջպետական պայմանագրի ստորագրում,
- հակամարտության կարգավորման ներկայիս ձեւաչափի փոփոխում եւ Արցախի մասնակցության ապահովում,
- Արցախ-ՀՀ-Սփյուռք համագործակցության մեջ Արցախի լիարժեք եւ վստահելի գործակցություն,
- եւ ընդհանրապես՝ Ղարաբաղյան հակամարտության հետ կապված՝ ՀՀ և ԱՀ լիազորությունների և պատասխանատվության ոլորտների հստակ սահմանում:

Հայաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցության դաշինք կնքելու անհրաժեշտության մասին դրույթ կա նաեւ **Դավիթ Իշխանյանի/ ԶՅԴ ծրագրում**: Հակամարտության լուծումը դիտվում է որպես «հայ դատի բաղկացուցիչ, Արցախի անկախության ճանաչումը՝ միացյալ Հայաստան կերտելու միջանկյալ հանգրվան»:

Միացումը «հենց հիմա եւ այստեղ» իրականացնելու մասին է «Միացյալ Հայաստան» կուսակցության ղեկավար **Վահան Բադալյանի ծրագիրը**: Այստեղ ասվում է, որ պետք է նախ վերացնել այդ միացումը խոչընդոտող հանգամանքները, որոնք վերաբերվում են Հայաստան-ԼՂ փոխհարաբերությունների մինչ օրս ընթացքին: Պետք է փոխել ԶՀ Սահմանադրությունը եւ Արցախը հռչակել Հայաստանի կազմում յուրահատուկ կառավարման համակարգով կազմավորում, այստեղից բխող բոլոր փոփոխություններով, իսկ Արցախն իր ներկայիս տարածքներով հռչակել Հայաստանի մաս:

**Հայկ Խանումյանի/«Ազգային վերածնունդ» կուսակցության ծրագրում** նշվում է, որ չնայած բանակցությունների միջոցով հակամարտության կարգավորումը անհրատեսական է, բայց Արցախի մասնակցությունը բանակցություններին կարող է բարձրացնել նրա սուբյեկտայնությունը: Ստատուս-քվոյի փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն պատերազմի միջոցով: Այս ուժի առաջնային նպատակներից է լինելու «ազատագրված շրջաններում ենթակառուցվածքների վերականգնումը և լայնածավալ վերաբնակեցման ռազմավարության մշակումն ու իրականացումը: Արցախը կարող է լինել միայն Հայաստանի Հանրապետության մաս: Անընդունելի է որևէ միտք, որը ենթադրում է Արցախի պատկանելություն կամ մանդատային ենթակայություն այլ երկրի կամ միջազգային կազմակերպության»:

Ըստ Էռլթյան հակամարտության կարգավորման մասին իրենց տեսլականները նախագահի դեռ պաշտոնապես չգրանցված թեկնածուները ներկայացրել էին նախքան պաշտոնական քարոզարշավի սկսվելը երկու իրադարձությունների բերումով: Առաջինը ԶՀ վարչապետի կոչն էր՝ ուղղված ԼՂ նախագահի պաշտոնի համար մրցակցակցության գնացող գործիչներին արտահայտել իրենց

վերաբերումները ՀՀ նախկին իշխանությունների վարած բանակցությունների հարցերի մասին (հունվարի 25), եւ երկրորդը դարձավ Մյունխենի անվտանգության ֆորումում Ն.Փաշինյան-Ի.Ալիեւ դեբատը (փետրվարի 15)<sup>7</sup>:

Ի դեպ հենց Մյունխենյան դեբատների մասին էին քարոզարշավի առաջին հատվածում նախագահի թեկնածուների ելույթները: Ահա մի քանի մեջբերում.

**Աշոտ Ղուլյան.** «Ինձ համար Մյունխենում ունեցած հանդիպումն ավելի ակտուալացրեց այն թեզը, որ մենք շատ հեռու ենք հիմնախնդրի լուծումից: ՀՀ վարչապետի ասածը կարծում եմ շատ գլոբալ է, քանի որ ռեալ քաղաքական իրավիճակում դժվար է պատկերացնել, որ կարող ենք ունենալ կարգավորման այնպիսի մի տարբերակ, որը հավասարապես ընդունելի կարող է լինել Արցախի, ՀՀ-ի եւ Ադրբեջանի համար»<sup>8</sup>:

**Արայիկ Հարությունյան.** «ՀՀ վարչապետի կողմից առաջ քաշվեց այն կարելու միտքը, որ առանց Արցախի ժողովրդի համաձայնության որեւէ լուծում չի կարող լինել»<sup>9</sup>:

**Վիտալի Բալասանյան.** «Որպես Արցախի Հանրապետության նախագահի թեկնածու, պարտավոր եմ արձագանքել: Ադրբեջանի նախագահը կրկին հնչեցրեց Ղարաբաղյան հակամարտության լուծման փուլային տարբերակը, այսինքն, այն տարբերակը, որն անընդունելի է Արցախի Հանրապետության համար»<sup>10</sup>:

<sup>7</sup> Այս մասին ավելի մանրամասն տես՝ «Արցախի 2020թ. քարոզարշավը գործողության մեջ. ընդհանուր ուրվագիծ» մեր հոդվածում, [https://www.aravot.am/2020/03/16/1100241/?fbclid=IwAR0keSqfe4RarIL-Wvub7yHC3ZE\\_jvj\\_eXfZRAyFwDI1pFyQxAiLRXQoKZI](https://www.aravot.am/2020/03/16/1100241/?fbclid=IwAR0keSqfe4RarIL-Wvub7yHC3ZE_jvj_eXfZRAyFwDI1pFyQxAiLRXQoKZI)

<sup>8</sup> Արցախի ընտրություններին չմիջամտելու ՀՀ իշխանությունների մոտեցումը ամենաճիշտն է, <https://www.1in.am/2706079.html>

<sup>9</sup> Արցախում պայքարը լինելու է ոչ թե մերժելու սկզբունքով, այլ ծրագրային, <https://www.youtube.com/watch?v=Xj93T0JMPLg>

<sup>10</sup> Արցախի Հանրապետությունն անկախ, ժողովրդավարական, ինքնիշխան պետություն է, երբեք չի եղել և չի լինի Ադրբեջանի կազմում. ցանկացած այլ մոտեցում ընկալվում է որպես պատերազմի սպառնալիք, <https://168.am/2020/02/16/1257340.html>

**Մասիս Մայիլյան.** «Ես Մադրիդյան սկզբունքների մասին դեռ այն ժամանակ արձագանքել եմ և բացատրել եմ բոլոր վտանգները: Այդ ժամանակ ես պետական պաշտոն չունեի: Նշանակվելով արտաքին գործերի նախագահ՝ ես հետևողական եմ եղել և շարունակել եմ նույն բանն ասել: Այս թավշյա հեղափոխության հետևանքով՝ նոր իշխանությունները որդեգրել են այն կարևոր քաղաքականությունը, որը մենք էինք վարում, որ Արցախը պետք է վերադառնա բանակցային սեղան: Ինչպես Փաշինյանն է հայտարարել, կարևոր է, որ բանակցային փաստաթուղթ չկա»<sup>11</sup>:

**Դատելով քարոզարշավի ընթացքում հակամարտության թեմայով շրջանառված ուղերձների բովանդակությունից, կարող ենք միանշանակ ասել, որ այս ընտրությունները ոչ թե հակամարտության կարգավորման եւ որեւէ զիջման, որքան դիրքերն ամրապնդելու եւ ԼՂ ներկայիս կարգավիճակը պահելու մասին էին:**

**Իսկ եթե հաշվի առնենք հակամարտության թեմայի ինտենսիվությունը մյուս շրջանառված թեմաների շարքում, ապա կարող ենք միանշանակ ասել, որ այս ընտրությունները ոչ թե հակամարտության, այլ ԼՂ ներքին կյանքը բարելավելու եւ Հայաստանի հետ փոխհարաբերությունների մասին էին:**

---

<sup>11</sup> Կամ Հայաստանի իշխանություններն են խաբում, կամ՝ Ղարաբաղի. արցախցու հարցը Մասիս Մայիլյանին  
<https://www.1in.am/2709903.html>

## Ովքեր՝ ինչ թեմաներով

Հայաստանյան ու դարաբաղյան ՉԼՄ-ներում արծարծված թեմաների վարկանիշային տարբերությունները հատկապես դրսևորվել է նախագահի թեկնածուների ցուցանիշներով:

Հայաստանյան մեդիայում նրանց մեծ մասը (14-ից 8 թեկնածուներ) ավելի շատ քանակի թեմաներից է խոսել, քան դարաբաղյանում: Այդպես է եղել Վիտալի Բալասանյանի, Արայիկ Հարությունյանի, Մասիս Մայիլյանի, Աշոտ Ղուլյանի, Հայկ Խանումյանի<sup>12</sup>, Վահան Բադասյանի<sup>13</sup>, Բելլա Լալայանի դեպքում: Ի դեպ, վերջինս մյուս ինքնառաջադրված նախագահի թեկնածուներից միակն է, որին ոչ միայն ավելի հանրահայտ ու քաղաքական հետագիծ ունեցող գործիչների չափ տեղ է հատկացվել հայաստանյան ՉԼՄ-ներում (ՀՀ իշխանությունների նկատմամբ ընդդիմադիր դիրքեր բռնած օնլայն ՉԼՄ-ներում եւ հեռուստահարթակներում), այլև խոսել է բազմաթիվ թեմաներով: Այնքան, որքան Մասիս Մայիլյանը, Աշոտ Ղուլյանը, Դավիթ Բաբայանը<sup>14</sup>:


**Տես ստորել բերված գրաֆիկը:**

<sup>12</sup> Հայկ Խանումյանը մասնակցում էր ընտրություններին իր «Ազգային վերածնունդ» կուսակցության հետ:

<sup>13</sup> Վահան Բադասյանը մասնակցում էր ընտրություններին իր «Միացյալ Հայաստան» կուսակցության հետ:

<sup>14</sup> Դավիթ Բաբայանը մասնակցում էր ընտրություններին իր «Արցախի պահպանողական կուսակցության» հետ:

## Նախագահի թեկնածուների արժարժած թեմաների քանակը Հայաստանի եւ ԼՂ մեդիայում



Առաջին փուլի քվեարկությամբ առաջին երեք տեղերը զբաղեցրած թեկնածուներից **Արայիկ Հարությունյանը** հայաստանյան մեդիայում ամենից շատ անգամ խոսել է նախընտրական քարոզարշավի ընթացքի ու բնույթի մասին, ապա տնտեսության, հակամարտության նշանակության եւ կարգավորման, ՀՀ-ԼՂ հարաբերությունների, սոցիալական խնդիրների մասին: Իսկ ԼՂ

մեղիայում՝ ամենից շատ խոսել է ներքին խնդիրներից՝ ԼՂ տնտեսության, սոցիալական ու առողջապահական ոլորտների բարեփոխման մասին, ինչպես նաեւ՝ իր անցած ուղու մասին:

**Մասիս Մայիլյանի** ելույթներից հայաստանյան մեղիային ամենից շատ անգամ հետաքրքրել են նախընտրական քարոզարշավի ընթացքի նրա գնահատականները, ապա՝ հակամարտության հարցերը, նրա տեսլականը ԼՂ-ում ներքաղաքական հարաբերությունների, ՀՀ-ԼՂ հարաբերությունների, ընտրությունների ընթացքում նրան սատարող քաղուժերի ու գործիչների հետ համագործակցության հարցերը, ընտրական գործընթացը դադարեցնելու եւ ընտրությունները հետաձգելու մասին նրա հայտարարությունները: Իսկ ղարաբաղյան մեղիայի ուշադրությունը գրավել են Մայիլյանի արտահայտած մտքերը կոռուպցիայի դեմ պայքարի, իր մասին հայաստանյան ՉԼՄ-ներում շրջանառվող ապատեղեկատվության եւ քարոզարշավի ընթացքի, տնտեսության եւ ԼՂ-ի իրավական համակարգի մասին:

**Վիտալի Բալասանյանի** ամենից շատ արծարծած 5 թեմաները հայաստանյան եւ ղարաբաղյան մեղիայում մասամբ են տարբերվել: Հայաստանյան մեղիայում ամենից շատ անգամ նա արտահայտվել է անվտանգության ու հակամարտության, ՀՀ-ԼՂ հարաբերությունների, իր անցած ուղու եւ ընտրախախտումների թեմաներով: Իսկ ղարաբաղյան մեղիայի համար առաջնահերթ հետաքրքրություն են ներկայացրել Բալասանյանի հայտարարությունները հակամարտության/կարգավորման, ԼՂ-ում ներքաղաքական հարաբերությունների, ՀՀ-ԼՂ հարաբերությունների ու Միացումի, ապա նաեւ ընտրական գործընթացի մասին, այդ թվում նաեւ այն հայտարարությունները, որոնք նա սկսեց անել քարոզարշավի կեսերից եւ որոնցով առաջարկում էր հաշվի առնել համաճարակի սպառնալիքը, հետաձգել ընտրությունները:

**Մյուս թեկնածուների առավել շատ արծարծած թեմաների մասին տես՝ Հավելված, Աղյուսակ 1, Աղյուսակ 2:**

## Ովքեր՝ որքան, ում մասին՝ որքան

Հայաստանյան եւ դարաբաղյան ՉԼՄ-ներում ընտրությունների թեմայով առավել շատ անգամ հանդես եկած թեկնածուների ցանկն Էականորեն տարբեր է: Այսպես հայաստանյան օնլայն ՉԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում մյուսներից ավելի շատ է տեղ գտել նախագահի թեկնածուներից Վիտալի Բալասանյանի (286 անգամ), ապա հաջորդաբար՝ Արայիկ Հարությունյանի (232), Վահան Բադալյանի (121), Մասիս Մայիլյանի (103) եւ Հայկ Խանումյանի (89) խոսքը:

Մինչդեռ ԼՂ մեդիայում այս առումով առաջին տեղում է եղել ՀՀԴ-ի կողմից առաջադրված նախագահի թեկնածու Դավիթ Իշխանյանի խոսքը (119 անգամ, եւ գլխավորապես այս կուսակցությանը պատկանող Aparaj.am-ում տեղ գտած նրա ելույթների շնորհիվ), ապա գրեթե երեք անգամ քիչ ցուցանիշով Արայիկ Հարությունյանը (45), Վիտալի Բալասանյանը (20), Վահան Բադալյանը (15) ու Մասիս Մայիլյանը (14):

Թե Հայաստանի, թե ԼՂ մեդիայում ընտրությունների թեմայով հանդես եկած ՀՀ եւ ԼՂ գործող իշխանությունների ցուցանիշներն ավելի համեստ վարկանիշային տողերում են: Այսպես, հայաստանյան մեդիայում իշխանական շրջանակներից ամենից շատ անգամ հնչել է ՀՀ վարչապետի, ապա ԼՂ գործող նախագահի, եւ հետո միայն ՀՀ իշխանական տարբեր ճյուղերի ներկայացուցիչների խոսքը: ԼՂ մեդիայում առավել շատ անգամ տեղ է գտել ԼՂ գործող նախագահի, ապա Էականորեն ավելի քիչ ՀՀ վարչապետի ու ՀՀ իշխանության այլ ներկայացուցիչների խոսքը:

Ի տարբերություն հայաստանյան մեդիայի, որտեղ շնորհիվ հիմնականում հայաստանյան ՉԼՄ-ների պատրաստած տեսանյութերի, շոշափելի տեղ են գտել ԼՂ քաղաքացիների կարծիքները (այս կամ այն թեկնածուների, եւ առհասարակ ընտրությունների նշանակության, նրանց սպասելիքների ու խնդիրների մասին - 96 անգամ), ԼՂ ՉԼՄ-ներում նրանց խոսքը գրեթե չի եղել (արձանագրել ենք ընդամենը 1 դեպք): **Տես հավելված՝ Աղյուսակ 3, Աղյուսակ 4**

Հայաստանի եւ ԼՂ օկլայն հարթակներում տարբեր թեկնածուներ արժանացել են տարբեր ՉԼՄ-ների ուշադրությանը: Այսպես, Արայիկ Հարությունյանի մասին ամենից շատ անգամ խոսել են 1in.am, Artsakhpress.am, News.am կայքերում: Վիտալի Բալասանյանը եղել է ավելի շատ հայաստանյան, քան թե ղարաբաղյան մեդիայի ուշադրության տիրույթում: Նրա անունը ամենից շատ անգամ հիշատակել են 168.am, 1in.am, News.am կայքերում: Մասիս Մայիլյանի մասին ամենից շատ անգամ խոսել են 1in.am, News.am եւ 168.am կայքերում: Միակ թեկնածուն, ում անունը մնացածից շատ անգամ հիշատակել են ղարաբաղյան օկլայն հարթակներում Դավիթ Իշխանյանն է: Վերը նշված հանգամանքի բերումով: **Տես Հավելված՝ Աղյուսակ 5, Աղյուսակ 6**

## **Քարոզչություն եւ հակաքարոզչություն**

Քարոզարշավն իրենք, նախագահի թեկնածուները վարել են գլխավորապես սեփական դիրքորոշումները ներկայացնելու միջոցով, իսկ մրցակիցների կոնկրետ անունները հիշատակել են մեծ մասամբ չեզոք նշանով: Այսպես է պատկերը եւ հայաստանյան, եւ ղարաբաղյան ՉԼՄ-ներում:

Թեկնածուներից մի քանիսն են, որ ընտրողների հետ հանդիպումների ժամանակ, տարբեր ՉԼՄ-ներին տված հարցազրույցներում մրցակիցների նկատմամբ իրենց առավելությունները ներկայացրել են նաեւ նրանց դեմ հակաքարոզչության, այս կամ այն ոլորտի բարեփոխման մասին նրանց խոստումները կասկածի առնելու, նրանց նախորդ տարիների գործունեությունը, վարքը քննադատելու միջոցով:

Օրինակ, հայաստանյան մեդիայում Վիտալի Բալասանյանի՝ այլոց մասին դրական եւ բացասական գնահատականների ցուցանիշների միջեւ էական տարբերություն չի արձանագրվել: Նրա եույթներում համաչափ են եղել եւ սեփական քարոզչական, եւ ուրիշների դեմ ուղղված հակաքարոզչական երանգները:

Նախագահի մյուս թեկնածուն՝ Հայկ Խանումյանը, քարոզարշավի ժամանակ ուրիշների մասին քննադատական, բացասական նշանի գնահատականներ կրկնակի ավելի շատ է հնչեցրել, քան խոսել է դրական նշանով իր եւ իր քաղաքական ուժի մասին: Հայաստանյան ՉԼՄ-ներում հիմնականում հակաքարոզչության, այլ ոչ թե սեփական դիրքորոշումների քարոզչության վրա են կառուցված եղել նաեւ նախագահի ուրիշ երկու թեկնածուների՝ Վահան Բադալյանի եւ Բեյլա Լալայանի, ելույթները: Բացասական նշանով ուրիշների հասցեին հնչեցրած նրանց գնահատականների քանակն Էապես գերազանցել է թե դրական, թե չեզոք իմաստաբանական նշանի հայտարարություններին ու եզրահանգումներին:

Հակառակ պատկերն է նախագահի թեկնածուներ Արայիկ Հարությունյանի, Մասիս Մայիլյանի, Աշոտ Ղուլյանի, Դավիթ Բաբայանի եւ Դավիթ Իշխանյանի պարագայում: Նրանք շոշափելիորեն ավելի շատ վարել են քարոզչական, քան հակաքարոզչական մարտավարություն, նրանց խոսքում դրական գնահատականներն Էապես ավելի շատ են եղել բացասական գնահատականներից:

### **Տես Հավելված, Աղյուսակ 3:**

Այս առումով նույն պատկերն է ձեւավորվել նաեւ ղարաբաղյան մեդիայում: Այստեղ ուրիշների մասին ավելի շատ բացասական, քան դրական գնահատականներով արտահայտված թեկնածուների խմբին ավելացել է միայն նախագահի թեկնածու Ռուսլան Իսրայելյանը<sup>15</sup>: **Տես Հավելված, Աղյուսակ 4:**

Ուշագրավ է, որ ուրիշների մասին բացասական գնահատականներով խոսքը նախագահի թեկնածուների մեծ մասը (14 թեկնածուներից 9-ը) կառուցել է ոչ կոնկրետ ընդհանրական հիշատակումներով, կիրառելով «Արցախի իշխանություններ», «ՀՀ իշխանություններ», «քաղուժեր/որոշ ուժեր», «թեկնածուներ», «որոշ թեկնածուներին սպասարկող որոշ լրատվամիջոցներ», «(ոմանք) ասում են» ձեւակերպումները: Այսպես են վարվել նաեւ երկրորդ փուլ դուրս եկած երկու թեկնածուները՝ Մասիս Մայիլյանն ու Արայիկ Հարությունյանը, որոնց հասցեին քիչ չեն եղել բացասական գնահատականներ ու մեկնաբանություններ տարբեր

<sup>15</sup> Ռուսլան Իսրայելյանը ընտրություններին մասնակցել է «Անկախության սերունդ կուսակցության» հետ միասին:

հեղինակների, այդ թվում՝ Հայաստանի ու ԼՂ հասարակական շրջանակների ներկայացուցիչների, հայաստանյան առանձին ՉԼՍ-ների կողմից (News.am, 168.am, Արմայուզ ԶԸ- Հայելու առաջ, 5—րդ ալիք ԶԸ – Հարցազրույց հաղորդաշարեր):<sup>16</sup> Արայիկ Հարությունյանի ուրիշների մասին հնչեցրած բացասական գնահատականների 92%-ը եղել է ոչ կոնկրետ, ընդհանրական հիշատակումներով: Մասիս Մայիլյանը բացասական նշանով ոչ մի կոնկրետ ուրիշների հիշատակում չի արել:


Նախագահի այս եւ մյուս թեկնածուների արած քննադատական հիշատակումների հանրագումարով ստացվել է, որ բացասական նշանի այլոց հիշատակումների մեծ մասն ըստ էության անհասցե է եղել:

**Տես ստորեւ բերված գրաֆիկը:**

---

<sup>16</sup> Այս մասին տես նաեւ «Արցախի 2020թ. քարոզարշավը գործողության մեջ. ընդհանուր ուրվագիծ» մեր հոդվածում, [https://www.aravot.am/2020/03/16/1100241/?fbclid=IwAR0keSqfe4RarIL-Wvub7yHC3ZE\\_jvj\\_eXfZRAyFwDI1pFyQxAILRXQoKZI](https://www.aravot.am/2020/03/16/1100241/?fbclid=IwAR0keSqfe4RarIL-Wvub7yHC3ZE_jvj_eXfZRAyFwDI1pFyQxAILRXQoKZI)

Հայաստանյան օնլայն ՁԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում կոնկրետ եւ ոչ կոնկրետ քննադատական հիշատակումները նախագահի թեկնածուների խոսքում



Նախագահի թեկնածուների նկատմամբ ակնհայտ նախապատվություն է դրսևորվել հայաստանյան ՉԼՄ-ներում, որն արտահայտվել է բացահայտ հակաքարոզչական ելույթներով ՀՀ նախկին իշխանությունների հետ առնչություններ ունեցող եւ օնլայն ՉԼՄ-ներում, եւ հեռուստաընկերություններում: Թիրախում գլխավորապես Մասիս Մայիլյանն ու թիմակիցներն են եղել, նրան սատարող գործիչները, որոնց դեմ ծավալվել են ամբողջական տեղեկատվական հակաքարոզչական գործողություններ այն մասին, թե նա անցանկալի թեկնածու է Ռուսաստանի համար, թե նրան սատարում են հայաստանյան սորոսական ուժերը: Չնայած անմիջապես հակադարձված հերքումներին, հակաքարոզչական այս գծերը շարունակվեցին մինչեւ ոչ միայն առաջին փուլի ավարտը, այլեւ դրանից հետո էլ, երբ նա հայտարարեց ըստ էության երկրորդ փուլին չմասնակցելու իր որոշման մասին<sup>17</sup>: Ի տարբերություն՝ Արայիկ Հարությունյանի դեմ ուղղված հակաքարոզչական ելույթները վերաբերվել են անձամբ նրան (որպես ԼՂ նախկին վարչապետ, որպես գործարար, Ղարաբաղյան պատերազմի մասնակից, 2016թ. Ապրիլյան պատերազմի տարիներին ունեցած նրա դերակատարության եւ գործողությունների մասին են եղել):

Հայաստանյան մեդիայում ԼՂ նախագահի թեկնածուների օգտին քարոզչության կամ նրանց դեմ հակաքարոզչության դիրքորոշումը հատկապես ընդգծվել է հայաստանյան տարբեր հեռուստաընկերությունների թոռք-շոու հաղորդումներ հրավիրված հասարակական-քաղաքական գործիչների արտահայտած խոսքում: Այսպես օրինակ, ՀՀ իշխանությունների նկատմամբ

---

<sup>17</sup> Վիտալի Բալասանյանը Արցախի անվտանգության միակ երաշխավորն է, Արմնյուզ ՀԸ, «Հայելու առաջ» հաղորդում, <https://www.youtube.com/watch?v=rTZdCVhQa9Y&list=PLq1nxWzeILqHOSyq5tY7COOgKK8Go5ul&index=7>, Մասիս Մայիլյանը երբեք տեր չի կանգնել իր ծայներին, 5-րդ ալիք ՀԸ, «Հարցազրույց» հաղորդում, <https://www.5tv.am/programs/%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%A6%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.html?episode=2219>, Սորոսականները կանգնած են Մասիս Մայիլյանի կողքին, 5-րդ ալիք ՀԸ, «Հարցազրույց» հաղորդում, <https://www.5tv.am/programs/%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%A6%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.html?episode=2217>

ընդդիմադիր դիրքեր ունեցող հեռուստաընկերություններ հարցազրույցների են հրավիրվել գործիչներ, որոնք հակաքարոզչական գնահատականներ են հնչեցրել Մասիս Մայիլյանի հասցեին, դրական են արտահայտվել Վիտալի Բալասանյանի օգտին: ՀՀ օնլայն ՉԼՍ-ներում կիրառվել է նաեւ նախընտրելի թեկնածուների ՖԲ-յան էջերի կոնտենտներ հրապարակելու, կամ այս հարցում իրենց քարոզչական գծին համապատասխանող հայաստանյան տարբեր գործիչների, վերլուծաբանների այլ ներկայացուցիչների ՖԲ-յան գրառումներ արտատպելու միջոցը: Այս մասին ավելի մանրամասն՝ ստորել:


**Տես՝ Հավելված, ՀՀ հեռուստաընկերությունների թոք-շոու հաղորդումներում ընտրությունների թեմայով ելույթի հրավիրվածների ցանկ:**

## **Ֆեյսբուքը ԼՂ ընտրությունների քարոզչական գործիք**

Այն պահից, երբ ԼՂ-ում վիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով դադարեցվեցին ընտրողների հետ թեկնածուների հանդիպումները փակ եւ բաց տարածքներում, ՖԲ-ը դարձավ թեկնածուների կողմից քարոզչությունն առաջ մղելու միակ գործիքը: Լսարաններ ներգրավելու տեսանկյունից սա հնարավորությունների շեշտակի սահմանափակում համարել դժվար թե կարելի է, եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակ ԼՂ ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների մոտ 60%-ը ՖԲ օգտատերեր էին:<sup>18</sup> Սրան գումարենք նաեւ հայաստանյան 1 300 000 օգտատերերի այն խմբերին, որոնք հետաքրքրված էին ԼՂ ընտրություններով: Իրենց՝ նախագահի 14 թեկնածուների, լսարաններն առաջին փուլի պաշտոնական քարոզարշավի մեկնարկի պահին տարբեր չափերի են եղել: Բայց քարոզարշավի ընթացքում էականորեն ընդլայնվեցին մի քանի թեկնածուների լսարաններ: **Տես ստորել բերված գրաֆիկը**

<sup>18</sup> Ընտրությունների ժամանակ ՖԲ սոցցանցի դարաբաղյան օգտատերերի քանակը 65 հազար է եղել, որոնցից մոտ 60 000-ը 18 եւ ավելի բարձր տարիքի քաղաքացիներ են: ԼՂ-ում ընտրության իրավունք ունեին 103 506 քաղաքացիներ:

## Նախագահի թեկնածուների ՖԲ լսարանների դիկտանդան քարոզարշավի ընթացքում



Իհակե միանշանակ չենք կարող պնդել թե հենց այս պատճառով, բայց քարոզարշավի ընթացքում Էսկանորեն մեծացել են այն թեկնածուների ՖԲ-յան լսարանները, որոնք սոցցանցային ուղիղ միացումների ընթացքում կազմակերպում էին նաեւ օգտատերերի հետ շփումներ՝ պատասխանելով տարբեր ոլորտներին առնչվող նրանց հարցերին: Մյուս թեկնածուները բավարարվեցին միակողմանի ուղերձներով, խոսում էին սեփական ծրագրային դրույթների մասին, այդ պահին առավել շատ շրջանառվող կարծիքների, կոնկրետ իրադարձությունների մասին: Դեռ նախքան Հայաստանում ԱԴ հայտարարելը եւ Ղարաբաղում ընտրություններն առհասարակ հետաձգելու մասին դիսկուրսի ծավալումը, օգտատերերի հարցերով առաջին ուղիղ միացումը ՖԲ-ում կազմակերպեց Մասիս Մայիլյանը<sup>19</sup>: Հետագայում, նման ուղիղ միացումների շարքեր ունեցան նաեւ Արայիկ Հարությունյանը<sup>20</sup>, Վիտալի Բալասանյանը<sup>21</sup>, Դավիթ Իշխանյանը<sup>22</sup>:

Երկրորդ փուլի ընթացքում թեկնածուներից Արայիկ Հարությունյանի ՖԲ-յան լսարանի աճման տեմպը գերազանցում էր Մասիս Մայիլյանի լսարանի աճման տեմպին, եւ իսկ ապրիլի 13-ի դրությամբ (երկրորդ փուլի քվեարկության նախօրեին) Հարությունյանի ՖԲ-յան լսարանը 1.7 անգամ մեծ էր Մասիս Մայիլյանի լսարանից (Արայիկ Հարությունյանի լսարանը հասել էր 32 648 հավանողների ու հետեւորդների, Մասիս Մայիլյանի լսարանը՝ 18 641 հավանողների եւ հետեւորդների):

---

<sup>19</sup> <https://www.facebook.com/MasisMayilian/videos/655847201841986/>, <https://www.facebook.com/MasisMayilian/videos/512344269482981/>

<sup>20</sup> [https://www.facebook.com/ArayikHarutyunian/videos/207738833814155/?epa=SEARCH\\_BOX](https://www.facebook.com/ArayikHarutyunian/videos/207738833814155/?epa=SEARCH_BOX)  
[https://www.facebook.com/ArayikHarutyunian/videos/2506701769433854/?epa=SEARCH\\_BOX](https://www.facebook.com/ArayikHarutyunian/videos/2506701769433854/?epa=SEARCH_BOX)

<sup>21</sup> <https://www.facebook.com/BalasanyanVitali/videos/3379226708772050/>,  
<https://www.facebook.com/BalasanyanVitali/videos/2487744554874081/>,

<sup>22</sup> <https://www.facebook.com/DavitIshkhanyann/videos/211411326791027/>, <https://www.facebook.com/DavitIshkhanyann/videos/208654997123354/>


Արդեն առաջին փուլի քարոզարշավի երկրորդ կեսին, հընթացս քարոզարշավի դեպի ՖԲ վերջնական տեղաշարժման, նախագահի թեկնածուների, նրանց առավել ակտիվ թիմակիցների էջերում գեներացվեց էքսկլյուզիվ նյութերի շտեմարան, որը սակայն հայաստանյան մեդիան օգտագործեց քիչ անգամ: Էլ ավելի քիչ էին ՖԲ-յան բովանդակությունների արտատպությունները նաեւ ԼՂ մեդիայում: Քիչ են եղել անգամ այն թեկնածուների ՖԲ-յան էջերից նյութերի վերարտադրման դեպքերը, որոնց նկատմամբ դրսևորվել է ակնհայտ քաղաքական նախապատվություն (Artshakhpess.am, Aparaj.am):

Հայաստանյան ՉԼՄ-ներում բոլորից շատ անգամ ՖԲ-յան էջերի նյութեր է ներկայացվել News.am-ում, ընդ որում՝ մեծ մասը Վիտալի Բալասանյանի էջից: Այս լրատվամիջոցը նաեւ արտատպել է մի շարք հայաստանյան հասարակական-քաղաքական գործիչների ՖԲ-յան գրառումները, որոնք ընդդիմադիր կեցվածք ունեն ՌՀ իշխանությունների եւ դարաբաղյան ուղղությամբ նրանց վարած քաղաքականության նկատմամբ: Այս առումով նույն պատկերն է ձևավորել 168.am-ը: Armtimes.com-ի քիչ քանակի ՖԲ-յան արտատպությունների շարքում Արայիկ Հարությունյանի եւ Մասիս Մայիլյանի գրառումներն են եղել ընտրությունների հետաձգման մասին նրանց դիրքորոշումներով: Թեկնածուների ՖԲ-յան նյութերն իր էջ բերած միակ ԼՂ օկլայնը Artsakhpess.am-ն է եղել: Երկու անգամ Արայիկ Հարությունյանի, մեկ անգամ Դավիթ Բաբայանի ՖԲ-յան ստատուսների արտատպություն ենք արձանագրել այս հարթակում:

Նշենք նաեւ, որ չեն եղել ՖԲ-յան ուղիղ միացումների վերարտադրության դեպքեր ոչ հայաստանյան, ոչ դարաբաղյան օկլայն հարթակներում:

Միգուցե հանգամանքների բերումով, սակայն 2020 թ. ընտրությունների ընթացքում ՖԲ-ը դարձավ նախընտրական քարոզչական ակտիվ հարթակ: Կարող ենք նաեւ ասել, որ հետագայում այն ավելի լայն կիրառություն կունենա դարաբաղյան քաղաքական գործընթացների ժամանակ: **Տես ստորեւ բերված գրաֆիկը**

## Արտատպուհություններ \$Բ էջերից



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Չնայած դեռ ԼՂ-2020 ընտրությունների պաշտոնական մեկնարկից շատ առաջ նկատելի էր այդ գործընթացով նաեւ Հայաստանում ընդգծված հետաքրքրվածությունը, եղան հանգամանքներ (Հայաստանում սահմանադրական հանրաքվեի քարոզարշավ, կորոնավիրուսի տարածում), որոնց բերումով հայաստանյան մեղիայում ընտրությունների թեման ընդգծված ինտենսիվ չէր լուսաբանվում: Իսկ դարաբաղյան մեղիան ընդհանուր առմամբ էլ ավելի պակաս ինտենսիվությամբ էր լուսաբանում ընտրությունները, թեեւ ֆորմալ առումով ընտրությունների թեման ստվերող այլ գործընթաց ԼՂ-ում չկար: Մյուս կողմից, եթե նկատի ունենանք ԼՂ-ում նախորդ ընտրությունների մասին հայաստանյան մեղիայի դրսեւորած ակտիվությունը (հիմնականում՝ ուղղակի լուրի տեսքով գործընթացին անդրադարձները, թեկնածուների պակաս խոսքը մեղիա հարթակներում), կարող ենք փաստել, որ այս ընտրությունների լուսաբանումն ավելի ակտիվ բնույթ է կրել հայաստանյան մեղիայում, քան նախորդ գործընթացների ժամանակ:
- Հայաստանյան ՉԼՄ-ներում մրցակից ուժերն ու նախագահի թեկնածուներն ավելի շատ են տեղ գտել, քան դարաբաղյան մեղիայում: ԼՂ օկլայն հարթակները դրսեւորել են կրավորական վարք, չեն օգտվել այլ հարթակների էքսկլյուզիվ բովանդակությունները (անգամ հայաստանյան ՉԼՄ-ներում հրապարակված իրենց նախընտրելի թեկնածուների հարցազրույցները, իրենց նախընտրելի թեկնածուների սոցցանցային ելույթները՝ ուղիղ միացումները) շրջանառելու հնարավորությունից: Առհասարակ, դարաբաղյան մեղիային բնորոշ չէ այլ ՉԼՄ-արտադրանքի շրջանառումը:
- Ընտրությունների ընթացքում արձանագրված թեմաների տարբեր առաջնահերթությունները ցույց են տալիս, որ հայաստանյան մեղիային ավելի շատ հետաքրքրել են քաղաքական բնույթի թեմաներ՝ հակամարտություն, ՀՀ-ԼՂ հարաբերություններ, ԼՂ-ում իրավունքներ եւ ազատություններ, ընտրությունների ազատ, թափանցիկ անցկացում եւ այլն:

Իսկ ղարաբաղյան մեդիայում ավելի շատ տեղ է հատկացվել ներքին կյանքին առնչվող խնդիրներին՝ սոցիալական հարցեր, տնտեսություն, կոռուպցիա, իրավունքներ/ազատություններ եւ այլն: ՀՀ-ԼՂ հարաբերությունների թեմային հայաստանյան մեդիայում ավելի շատ են անդրադարձել, քան ԼՂ մեդիայում: Մեծ մասամբ այս թեման բովանդակել է ԼՂ ընտրություններին Հայաստանի միջամտության, Հայաստանի համար ընտրությունների ազատ ու թափանցիկ անցկացման նշանակության, վարչապետ Ն.Փաշինյանի համար Նախընտրելի ԼՂ Նախագահի թեկնածու լինել/չլինելու հարցեր:

- Դատելով քարոզարշավի ընթացքում հակամարտության թեմայով շրջանառված ուղերձների բովանդակությունից, կարող ենք միանշանակ ասել, որ այս ընտրությունները ոչ թե հակամարտության կարգավորման, զիջումների, այլ անվտանգությունն ամրապնդելու եւ ԼՂ ներկայիս կարգավիճակը պահելու մասին էին: Իսկ եթե հաշվի առնենք հակամարտության թեմայի ինտենսիվությունը մյուս շրջանառված թեմաների շարքում, ապա կարող ենք միանշանակ ասել, որ այս ընտրությունները ոչ թե հակամարտության, այլ ԼՂ ներքին կյանքը բարելավելու եւ Հայաստանի հետ փոխհարաբերությունների մասին էին:
- Հայաստանյան եւ ղարաբաղյան տարբեր ՉԼՄ-ներում քարոզչական մակարդակում ակնհայտորեն դրսեւորվել է Նախագահի որոշ թեկնածուների Նախապատվություն մյուսների համեմատ: Դա եղել է ինչպես նրանց քարոզարշավներն ավելի ինտենսիվ լուսաբանելու, նրանց խոսքին ավելի շատ տեղ ու եթեր տրամադրելու, այնպես էլ ոչ Նախընտրելի թեկնածուներին տեղ չտալու, կամ նրանց դեմ հակաքարոզչական գործողություններ իրականացնելու միջոցով: Ի տարբերություն ղարաբաղյան օնլայն հարթակների, որտեղ, օրինակ ՀՀԴ պատկանելիություն ունեցող [aparaj.am](http://aparaj.am)-ը լուսաբանել է բացառապես դաշնակցական Նախագահի թեկնածուի եւ կուսակցության քարոզարշավը, հայաստանյան օնլայն հարթակներում, հեռուստատեսքերում իրականացվել են եւ քարոզչական, եւ հակաքարոզչական գործողություններ: Հակաքարոզչական գործողությունների թիրախում հիմնականում եղել է Նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանը ՀՀ Նախկին իշխանություններին սատարող լրատվամիջոցներում: Նրա մասին հայաստանյան մեդիայում ապատեղեկատվությունը, հաճախ կոշտ հակաքարոզչական ձեւակերպումները շարունակվեցին Նաեւ առաջին փուլի քվեարկությունից հետո, երբ ըստ

Էության նա հրաժարվել էր ընտրություններին իր մասնակցությունից: Ընդգծենք, որ հայաստանյան հեռուստաընկերություններում (5-րդ ալիք, Արմայուզ) հակաքարոզչական գործողություններ իրականացվել են թոք-շոուի՝ ընտրությունների թեմայով խոսելու հրավիրված ՀՀ նախկին իշխանությունների կողմնակից վերլուծաբանները, ՀՀ ներկայացուցիչները, քաղաքական գործիչները:

- Իրենք՝ նախագահի, թեկնածուները, հիմնականում կոռեկտ քարոզարշավ են ունեցել: Օրինակ, մրցակիցների մասին քննադատական նրանց խոսքում գերակշռել են ոչ կոնկրետ հիշատակումներ՝ «որոշ թեկնածուներ», «ոմանք» եւ այլն: Անգամ այն դեպքերում, երբ հանդես են եկել ի պատասխան իրենց հասցեին ուղղված հակաքարոզչական մեղիա գործողությունների:
- Ընտրությունների ընթացքում, կենդանի շփումները սահմանափակելու, ապա նաեւ դրանք իսպառ բացառելու արդյունքում քարոզարշավի ակտիվ գործիք դարձավ ՖԲ-ը: Առաջին անգամ դարաբաղյան ընտրությունների ժամանակ մի շարք թեկնածուներ սկսեցին կազմակերպել ուղիղ միացումների շարքեր, որոնց ընթացքում նրանք պատասխանում էին օգտատերերի հարցերին: Կարծում ենք առաջիկայում ՖԲ-ն ավելի լայն կիրառություն կունենա ԼՂ ներքաղաքական կյանքում, որն այս ընտրություններից հետո էլ ավելի աշխուժացման միտումներ կունենա:
- Սովորական ընտրողների ձայնը լսելի էր նաեւ հայաստանյան օնլայն հարթակներում շնորհիվ այն բանի, որ ԼՂ ընտրությունները տեղում լուսաբանելու համար մեկնած մի շարք հայաստանյան ՉԼՄ-ներ տեսանյութեր էին տեղադրում թեկնածուների՝ քաղաքացիների հետ ունեցած հանդիպումների մասին, ներառյալ նաեւ քաղաքացիների ելույթները: ԼՂ ընտրողների խոսքն ավելի շատ անգամ լսելի է եղել հայաստանյան օնլայն ՉԼՄ-ներում, քան դարաբաղյան մեղիայում: Բացի Արցախի հանրային հեռուստաընկերությունից ուրիշ հետազոտված դարաբաղյան ՉԼՄ-ներ ընտրությունների թեման տեսանյութերի միջոցով չեն լուսաբանել:

## ՀՀ ԵՆ ԼՂ մեդիայում ընտրությունների մասին նյութերում գրանցված թեմաներ

1. Ընտրական գործընթաց
2. Նախընտրական քարոզարշավ
3. Ապատեղեկատվություն
4. Ատելության խոսք
5. Ընտրակաշառք/այլ խախտումներ
6. ՀՀ-ԼՂ հարաբերություններ
7. ԼՂ անկախություն
8. Միացում
